# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3304 ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
հեռ. +374-285-42036, 285-43868 ֆաքս
էլ.փոստ kapan.syuniq@mta.gov.am, info@kapan.am

3304 г.Капан, А.Манукян 5а
тел. +374-285-42036, 285-43868 факс
e-mail: kapan.syuniq@mta.gov.am, info@kapan.am


07 հունիսի 2022թ. N **Ե-08/3115**
**Ձեր** _____ **N** _____

**«ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊԸ**
**ՏՆՕՐԵՆ Ա. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ**

***Հարգելի պարոն Զաքարյան***

Կապանի համայնքապետարանի և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ միջև 2021թ. սեպտեմբերի 30-ին կնքվել է «Կապանի համայնքապետարանի կարիքների համար Վարդավանք բնակավայրի ակումբի շենքի նորոգման աշխատանքների կատարման» «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/33» ծածկագրով գնման պայմանագիրը՝ 15950000 /տասնհինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժակետ էր սահմանվել 2021թ. դեկտեմբերի 30-ը:

Հաշվի առնելով, որ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ կողմից սահմանված ժամկետում պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել և, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2021թ. դեկտեմբերի 30-ի թիվ 2203-Ա որոշումը, երկկողմ հաստատված համաձայնագրի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժակետը երկարաձգվել է մինչև 2022թվականի հունիսի 1-ը:

Նշված ժամկետում ևս ՍՊԸ կողմից պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել և շինարարական աշխատանքներ չեն իրականացվել:

Պայմանագրի 6.3 կետի համաձայն «Մեծ Հիմք-1» ՍՊԸ կրում է տուգանքի վճարման պարտավորություն՝ պայմանագրի գնի 0,5/զրո ամբողջ հինգ տասնորդական/ տոկոսի չափով՝ 79750/յոթանասունինը հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ գումարի չափով, որն անհրաժեշտ է վճարել Կապանի համայնքապետարանի 900315004144 հաշվեհամարին՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, գործառնական վարչություն, ինչպես նաև ՍՊԸ կրում է որակավորման և պայմանագրի ապահովումների վճարման պարտավորություն:

Հաշվի առնելով պայմանագրային ժամկետի ավարտը և, հիմք ընդունելով պայմանագրի 3.1 կետի բ/ ենթակետը, համայնքապետարանը միակողմանի ամբողջապես լուծում է «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/33» ծածկագրով գնման պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/33» ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված և պայմանագիր կնքած անձը

համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

*Կպգ. Ֆինանսական բաժին*